

ները՝ այն ուղարկում է ԱՄՆ, Ռուսաստան, Նիդեռլանդներ:

Այսպիսով՝ շնորհաւորում ենք հայաստանեան ամսագիր «Պառլամենտին»՝ մաղթելով բեղմնաւոր գործունէութիւն, պրոֆեսիոնալ աճ-զարգացում:

ՎԱՏՏԵՐ ՊԵՐՊԵՐԵԱՆ

ԵՊՀ Հայ բանասիրութեան ֆակուլտետի դասախօս

ՄԵԾԵՐԸ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԻ ՄԱՍԻՆ

Բոլոր յայտնագործութիւնները կը տրուին Աստուծոյ՝ ի բարօրութիւն մարդոց: Եթէ գիտնականը կը հնազանդի Աստուծոյ, Աստուած կ'օրհնէ անոր ձեռքի գործը, իսկ եթէ գիտնականը չի հնազանդիր Աստուծոյ եւ չի սիրեր Անոր արարչութիւնը, ապա անոր յայտնագործութիւնները կը վնասեն ողջ մարդկութեան:

Էռնեստ Ռեզերֆորտ

Հասարակութիւնը որ կ'անտեսէ Սուրբ Գիրքի ճշմարտութիւնները, կը քայքայի: Հասարակութեանը Աստուածաշունչէն զրկելը նոյնն է, ինչ դժբախտութեան առաջ դուռ բանալը: Մարդոց այդ գիրքի մասին պատմել, այն տարածել եւ բացատրել՝ ահա այս է մեր մեծագոյն պատիւն ու ուրախութիւնը:

Ալեքսանտր Սերգէեիչ Պուշկին

Գիտութիւնը հաւատ չի կառուցէր եւ չի փոխարինէր անոր, այլ կը ժողովէ դէպի հաւատ տանող ճանապարհի քարերը միայն, գիտութիւնը կը բերէ հաւատի անհրաժեշտութեան եւ ոչ թէ հաւատի:

Ուիլիամ Ռամզայ

Աստուածաշնչի վարդապետութիւններն այնպէս կը միահիւսուին մեր քաղաքացիական եւ հասարակական կեանքին, որ անհնար է երեւակայել մարդկային կեանքն առանց Սուրբ Գրքի: Անոր օտարումով մենք կը կորցնենք ամէն մի յենարան: Հետեւաբար՝ իւրաքանչիւր ողջամիտ մարդ պէտք է պարզ երեւակայէ, որ Աստուածաշնչի տարածման դադրեցումը մեծ վնաս կը հասցնէ մեր լաւագոյն ձգտումներուն: Մենք՝ ամերիկացիներս, այնքան պարտական ենք Սուրբ Գիրքին, որ շատոնց ժամանակն է մարել այդ պարտքերը:

Թէոդոր Ռուզուելտ

Առանց հոգեւոր վերածնունդի եւ առանց Գողգոթայի՝ մարդկութիւնը չի կրնար խոյս տալ Երրորդ Համաշխարհային պատերազմէն:

Դուայթ Տէյվիս Էյզենհաուեր